

IFCA

Independent Filmmakers Community of Armenia

Հայաստանի Անկախ Կինոգործիչների Համայնք

Ֆիլմի նախագծերի մրցույթների անցկացման և
ֆինանսավորման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(հատված)

Կանոնակարգի հատվածի այս առաջարկը ներկայացվում է

Արմինե Անդայի, Արևիկ Ավանեսյանի, Դավիթ Մաթևոսյանի,
Իննա Սահակյանի, Նարինե Քոչարի, Մաթիկ Ստեփանյանի,
Սեդա Գրիգորյանի, Բաֆֆի Նիզիբեանի, Վիկտորիա Ալեքսանյանի
կողմից

Երևան, 01.12.2018

ԳԼՈՒԽ 4.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

4. Ա Հանձնախմբերի ստեղծման ընթացակարգը

4.1. Կինոկենտրոնի հայտարարությամբ ստեղծվում է տվյալների բանկ՝ նախապայմաններին և չափորոշիչներին համապատասխան: (Չափորոշիչները Հավելված 1):

4.2. Թեկնածուները առաջադրվում են ազատ սկզբունքով:

4.3. Կինոկենտրոնի կողմից ստուգվում է իրենց տեխնիկական համապատասխանությունը:

4.4. Տվյալների բանկում տեղի է ունենում մասնագետների բաշխում՝ ըստ երկու դասակարգման՝ պրոդյուսեր և կինոգործիչ՝ (ռեժիսոր, սցենարիստ և կինոգետ):

4.5. Մրցույթից առաջ հայտարարվում է ամբողջ բանկը և այնտեղից առանձնացվում են այն մասնագետները, ովքեր տվյալ մրցույթում նախագիծ ունեն/նախագիծ ունի իրենց ընտանիքի անդամը կամ ընկերությունը, կամ նախորդ մրցույթին են մասնակցել՝ որպես մասնագետ: Նրանք չեն մասնակցում տվյալ մրցույթի ընտրությանը:

4.6. Հանձնախմբի անդամը հրավիրվում է 1 նստաշրջանի համար՝ 2 ամսով և վճարվում կատարած աշխատանքի համար:

4.7. Ազգային կինոկենտրոնում յուրաքանչյուր մրցույթի համար հայտարարվում է վիճակահանության օրը և մամուլի ներկայությամբ անցկացվում է վիճակահանությունը:

4.8. Ներկայացվում է լիամետրաժ ֆիլմի հանձնախմբի հավակնորդ 2 բանկերի փորձագետների անունները ամբողջությամբ: Պրոդյուսերների բանկից վիճակահանության սկզբունքով ընտրվում է 2 փորձագետ և կինոգործիչների բանկից վիճակահանության սկզբունքով ընտրվում է 3 փորձագետ:

4.9. Ներկայացվում է կարճամետրաժ ֆիլմի հանձնախմբի հավակնորդ 2 բանկերի փորձագետների անունները ամբողջությամբ: Պրոդյուսերների բանկից վիճակահանության սկզբունքով ընտրվում է 1 փորձագետ և կինոգործիչների բանկից վիճակահանության սկզբունքով ընտրվում է 4 փորձագետ:

4.10. Վիճակահանության սկզբունքով կազմավորվում է 2 հանձնախումբ՝ բաղկացած 5 փորձագետից, որոնք աշխատելու են տվյալ մրցույթի համար:

4.11. Նորից ստուգվում է, որ հանձնախմբերի անդամները (նաև՝ նրանց ընտանիքի անդամները) ընթացիկ մրցույթում՝ այդ պահի դրությամբ չեն առնչվում որևէ

ներկայացված նախագծի՝ որպես պրոդյուսեր, սցենարի հեղինակ կամ ռեժիսոր: Որևէ նախագծի հետ առնչություն չունի նաև իրենց կինոընկերությունը:

4.12. Հանձնախմբի անդամները իրականացնում են նախագծերի մրցույթը 2 փուլով. Նախնական ընտրություն (փաթեթների մանրամասները ստորև - տես՝ *Հավելված 2*) և ներկայացման փուլ (փիչինգ):

4.Բ. Հանձնախմբերի գործունեության ընթացակարգ

4.13. Նախնական ընտրության փուլում, փորձագետներին տրվում են Կինոկենտրոն դիմած ֆիլմ նախագծերի ամբողջական փաթեթները:

4.14. Մասնագիտական հանձնախմբի անդամը միավորներ է տալիս յուրաքանչյուր նախագծին՝

1. Ըստ դիմած փուլին համապատասխան գեղարվեստական բովանդակության. (Զարգացման փուլ. սինոպսիս և թրիթմենթ, արտադրության փուլ. սինոպսիս և սցենար, հետ-արտադրական փուլ. սինոպսիս և սևագիր մոնտաժ, տարածման փուլում՝ սինոպսիս և ֆիլմ) և դուրս է բերում մեկ միջին միավոր: (Սցենարի գնահատման չափորոշիչները ստորև - տես *Հավելված 3*)
2. Ըստ նախագծի փաթեթի բովանդակության. Դուրս է բերվում մեկ միջին միավոր Նախագծի գնահատման չափորոշիչները ստորև - տես *Հավելված 4*):

4.15. Ձևավորվում է գնահատված նախագծերի ցուցակ, որը ներկայացվում է քննարկման: Քննարկման ընթացքում փիչինգային փուլին ներկայացվելու համար բովանդակային և նախագծային փաթեթները՝ երկուսն էլ, պիտի հանձնախմբի ձայների մեծամասնությամբ գնահատված լինեն ոչ պակաս քան 4՝ 10-ի մեջ կամ հանձնախմբի մեկ անդամի կողմից ավել քան 6՝ 10-ի մեջ՝ բովանդակային և նախագծային փաթեթներով՝ առանձին-առանձին:

4.16. Այս փուլի արդյունքում, որոշվում են փիչինգի մասնակցող նախագծերը և հայտարարվում է նախնական ցուցակը (short list):

4.17. Մնացած բոլոր նախագծերը, որոնք դուրս են մնում հետագա մրցույթից, մրցույթի ավարտին ստանում են փորձագիտական եզրակացություն հանձնախմբի կողմից, այդ թվում նաև յուրաքանչյուր փորձագետի կողմից տրված միավորները:

4.18. Երկրորդ փուլում նախապես հայտարարված նախագծերի ներկայացուցիչները՝ պրոդյուսերը և ռեժիսորը, հրավիրվում են փիչինգի՝ իրենց նախագծերը ներկայացնելու և փորձագետների հարցերին պատասխանելու:

4.19. Ներկայացումը իրականացվում է հանձնախմբի անդամների և Ազգային կինոկենտրոնի տնօրենի ներկայությամբ:

4.20.Փիչինգի փուլում յուրաքանչյուր նախագծի տրվում է 20 րոպե. 10 րոպե ներկայացման և 10 րոպե՝ հարցերի համար:

4.21.Ներկայացման արդյունքները քննարկվում են հանձնախմբի կողմից: Ազգային կինոկենտրոնի տնօրենը մասնակցում է քննարկմանը խորհրդակցական ձայնի իրավունքով:

4.22.Քննարկման արդյունքում տեղի է ունենում նախագծերի վերջնական ընտրություն՝ տրվող ֆինասնավորման չափի հետ միասին՝ կանոնակարգի բյուջեի տրոհման պահանջներին համապատասխան:

4.23.Վերջնական ընտրությունից հետո հանձնախումբը տալիս է փորձագիտական եզրակացություն՝ յուրաքանչյուր նախագծին, այդ թվում՝ մերժված նախագծերին, ներառելով յուրաքանչյուր բովանդակային և նախագծային միավորները:

4. Գ. Տվյալների բանկ, նախապայմաններ և չափորոշիչներ

4.24.Տվյալների բանկը ստեղծվում է ազատ առաջադրման սկզբունքով:

4.25.Ցանկացած պրոդյուսեր, ռեժիսոր, սցենարիստ և կինոգետ, կարող է ինքնաառաջադրվել, եթե համապատասխանում է ստորև նշված պայմաններին, ինչպես նաև նրան կարող է առաջադրել որևէ այլ կինոգործիչ կամ կազմակերպություն (սակայն այս դեպքում էլ՝ տվյալները լրացնում է ինքը՝ առաջադրվող կինոգործիչը):

4.26.Կինոգործիչը տվյալների բանկում ներառվելու համար լրացնում է հայտ, որտեղ նշում է իր գործունեության և նվաճումների մանրամասները, նաև հավաստում դրանց ճշմարտացիությունը: Կինոգործիչը ստորագրում է տվյալների ճշմարտացիության փաստաթուղթ:

4.27.Յուրաքանչյուր տվյալը լրացվելուց, ներբեռնվում է համապատասխան փաստաթուղթ (մասնակցության հրավերը, մրցանակի փաստաթուղթը և այլն) կամ տրվում է հղում:

4.28.Ըստ լրացրած տեղեկությունների և նվաճումների ցանկի, հաշվարկվում են միավորները: Տվյալների բանկը հանրայնացվում է՝ լրացված հայտերի միավորներով հանդերձ:

4.29.Յուրաքանչյուր նստաշրջանից առաջ տեղի է ունենում վիճակահանություն՝ երկու առանձին կատեգորիաներով.

1. Պրոդյուսեր
2. Կինոգործիչ՝ Ռեժիսոր, Սցենարիստ, Կինոգետ

4.30.Տվյալ նստաշրջանի համար՝ վիճակահանությամբ ընտրված Փորձագետների կազմը հանրայնացվում է:

4.31. Լիամետրաժ ֆիլմի հանձնախմբի անդամ դառնալու համար հավակնորդը պետք է ունենա առնվազն 1 լիամետրաժ ֆիլմ: * Կարճամետրաժ ֆիլմի հանձնախմբի անդամ դառնալու համար հավակնորդը պետք է ունենա առնվազն 1 լիամետրաժ ֆիլմ կամ առնվազն 3 կարճամետրաժ ֆիլմ:*

** Այս պայմանը տարբեր է միայն կինոգետ մասնագիտությամբ փորձագետների համար, նրանց համար գործում է միայն միավորների նախապայմանը, որը ներկայացված է ստորև:*

4.32. Լիամետրաժ ֆիլմերի հանձնախմբի անդամ դառնալու համար պրոդյուսեր, սցենարիստ, ռեժիսոր մասնագիտություններով փորձագետը պետք է հավաքի առնվազն 30 միավոր, իսկ կինոգետ մասնագիտությամբ փորձագետը պետք է հավաքի առնվազն 20 միավոր:

4.33. Կարճամետրաժ ֆիլմերի հանձնախմբի անդամ դառնալու համար պրոդյուսեր, սցենարիստ, ռեժիսոր մասնագիտություններով փորձագետը պետք է հավաքի առնվազն 20 միավոր, իսկ կինոգետ մասնագիտությամբ փորձագետը՝ առնվազն՝ 12 միավոր:

4.34. Տվյալների բանկի հավակնորդ լինելու չափորոշիչներն ու միավորները՝ Հավելված 1:

4.35. Յուրաքանչյուր տվյալը լրացվում է, ներբեռնվում է համապատասխան փաստաթուղթ կամ տրվում է հղում:

4.36. Ստորագրվում է տվյալների ճշմարտացիության փաստաթուղթ (Էլեկտրոնային - կցելով անձնագրի սկանը):

4.37. Միայն տվյալներ տրամադրող փորձագետը 5 տարով զրկվում է տվյալների բանկում ներառվելու հնարվորությունից:

Հավելված 1

Չափորոշիչներ և միավորներ.

Պրոդյուսեր, սցենարիստ, ռեժիսոր մասնագիտություններով փորձագետի միավորների հաշվելու համակարգը՝ ըստ չափորոշիչների:

1. Միջազգային մրցանակ – (յուրաքանչյուր մրցանակը՝ 3 միավոր)
2. Միջազգային կինոփառատոների մրցութային մասնակցություն – (in competition Selection, յուրաքանչյուր մասնակցություն՝ 2 միավոր)
3. Միջազգային կինոփառատոների արտամրցութային մասնակցություն (Out of competition Selection) – (յուրաքանչյուր մասնակցություն՝ 1 միավոր)
4. Միջազգային կինոպլատֆորմների մասնակցություն (pitch selection) – (յուրաքանչյուր մասնակցություն՝ 2 միավոր)
5. Միջազգային կինոպլատֆորմների մրցանակ (pitch award) - (յուրաքանչյուր մասնակցություն՝ 3 միավոր)
6. Միջազգային համագործակցություն - լիամետրաժ (համատեղ արտադրություն, զարգացման / հետ-արտադրական դրամաշնորհ, միջազգային գործընկերություն) - յուրաքանչյուրը 3 միավոր
7. Միջազգային համագործակցության փորձ - կարճամետրաժ (համատեղ արտադրություն, դրամաշնորհ, միջազգային գործընկերություն) - յուրաքանչյուրը 2 միավոր
8. Միջազգային դասընթացների մասնակցություն – երկարատև - (2) (6 ամիս և ավել) (յուրաքանչյուրը՝ 2 միավոր, 5 դասընթաց՝ 10 միավոր)
9. Միջազգային դասընթացների մասնակցություն – կարճատև - (1) (յուրաքանչյուրը՝ 1 միավոր, 5 դասընթաց՝ 5 միավոր)
10. Միջազգային կինոփառատոնի ժյուրիի անդամ / միջազգային կինոփառատոնի ծրագրման փորձ – (յուրաքանչյուրը՝ 3 միավոր)
11. Միջազգային կինոպլատֆորմի մասնագիտական աշխատանքի փորձ (յուրաքանչյուրը՝ 2 միավոր)
12. Միջազգային աշխատարանների դասընթացավար – (յուրաքանչյուրը՝ 2 միավոր)
13. Դասախոսական աշխատանքի փորձ, Աշխատարանների դասընթացավար (1)

Ստորագրվում է տվյալների ճշմարտացիության փաստաթուղթ (Էլեկտրոնային - կցելով անձնագրի սկանը):

Միսալ տվյալներ տրամադրող կինոգործիչը 5 տարով զրկվում է տվյալների բանկում ներառվելու հնարավորությունից:

Կինոգետ մասնագիտությամբ փորձագետի միավորների հաշվելու համակարգը:

1. միջազգային կինոփառատոնի ծրագրման փորձ – (3)
2. միջազգային կինոփառատոնի ժյուրիի անդամ - (3)
3. միջազգային մամուլում տպագրված մասնագիտական հոդված - (3)
4. տպագրված մասնագիտական գիրք - (3)
5. միջազգային աշխատանքի փորձ, միջազգային աշխատարանների դասընթացավար (2)
6. դասախոսական աշխատանքի փորձ, աշխատարանների դասընթացավար (1)

Յուրաքանչյուր տվյալը լրացվում է, ներբեռնվում է համապատասխան փաստաթուղթ կամ տրվում է հղում:

Ստորագրվում է տվյալների ճշմարտացիության փաստաթուղթ (Էլեկտրոնային - կցելով անձնագրի սկանը):

Միսալ տվյալներ տրամադրող փորձագետը 5 տարով զրկվում է տվյալների բանկում ներառվելու հնարավորությունից:

Հավելված 2

Կինոնախագծի փաթեթը՝ ըստ զարգացման, արտադրական, հետ-արտադրական, տարածման փուլերի

Անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներառում է.

- Դիմում-հայտ (փուլ 1,2,3,4)
- Լոգոյան և սինոփսիս (փուլ 1,2,3,4)
- Սցենար (զարգացման, հետ-արտադրական և տարածման փուլերին դիմելու համար՝ սցենար ներկայացնելու անհրաժեշտություն չկա)
- Ռեժիսորի տեսլական (փուլ 1, 2)
- Արտադրող կինոընկերության գործունեության նկարագրություն (փուլ 1,2,3,4)
- Ռեժիսորի և պրոդյուսերի կենսագրություն և ֆիլմոգրաֆիա (փուլ 1,2,3,4)
- Ֆիլմի բյուջե (փուլերին համապատասխան)
- Ֆինանսական պլան (փուլերին համապատասխան)
- Իրավունքները հաստատող փաստաթղթեր (փուլ 2,3) - Պայմանագրեր/մտադրությունների նամակներ (անհրաժեշտ են գործընկերների առկայության դեպքում)
- Ռեժիսորի նախկին ֆիլմ/ֆիլմեր (փուլ 1,2,3,4)
- Վիզուալ նյութեր (լուսանկարներ, գրաֆիկա, և այլն) (փուլ 1,2)
- Ռեժիսորի և պրոդյուսերի մեկական լուսանկար (փուլ 1,2,3,4)
- Ռեժիսորի, պրոդյուսերի տեսլականներ (փուլ 1,2)
- Սցենարիստի տեսլական (փուլ 1)

Ոչ պարտադիր.

- Տեսարանային նախնական պատկերաշար ու փորձնական նկարահանումներ (1,2)
- Տարածման պլան (1,2,3,4)
- Ստեղծագործական խմբի և դերասանական կազմի ամբողջական կամ նախնական ցանկ (1,2,3,4)

Դիմումը և փաստաթղթերը ընդունվում են առցանց:

Հավելված 3

Բովանդակային նյութի* գնահատման չափորոշիչները

*Բովանդակային նյութ. թրիթմենթ, սցենար, սևագիր մոնտաժված ֆիլմ, ֆիլմ

N		1	2	3	4	5	6	7	8	9	10
1)	<i>գաղափար</i>										
2)	<i>սպատմություն / սյուժե</i>										
3)	<i>կերպարներ</i>										
4)	<i>կառուցվածք</i>										
5)	<i>երկխոսություն</i>										
6)	<i>Պատկերային լուծումներ</i>										
7)	<i>Ոճական լուծումներ</i>										

Ընթերցող՝ Անուն ազգանուն

Հավելված 4

Հանձնախմբի կողմից նախագծի գնահատման չափորոշիչները

N		1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<i>նախագծի գեղարվեստական/ գեղագիտական արժեքը</i>										
2	<i>միջազգային ճանաչման հնարավորությունը</i>										
3	<i>միջազգային համագործակցության պոտենցիալը</i>										
4	<i>իրականացվելիության ներուժը</i>										
5	<i>նախահաշվի տնտեսական հիմնավորումը</i>										
6	<i>հասույթ ապահովելու հեռանկարը</i>										

ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՍԸ	Ջարգացման փուլ	Արտադրական փուլ	Հետադարձադրական փուլ	Տարածում
1.Դիմում-հայտ	✓	✓	✓	✓
2.Լոգայն և Մինսփսիս (1-2 էջ)	✓	✓	✓	✓
3.Թրիթմենթ (8-15 էջ)	✓			
4. Սցենար		✓		
5. Ռեժիսորի պրոդյուսերի տեղականը (1 էջ)	✓	✓		
6. սցենարիստի տեղականը (1 էջ)	✓			
7.Արտադրող կինոընկերության նկարագրությունը և պետական գրանցման վկայականի պատճեն	✓	✓	✓	✓
9. Ռեժիսորի, պրոդյուսերի և սցենարիստի բիո-ֆիլմոգրաֆիան	✓	✓	✓	
10. Ֆիլմի բյուջե (փուլային)	✓	✓	✓	✓
11. Ֆինանսական պլան	✓	✓	✓	✓
12. Հեղինակային իրավունքներ	✓	✓	✓	✓
13.Սցենարի իրավունքների մասին պայմանագիր		✓	✓	✓
14.Նախագծին մասնակցելու մտադրությունների նամակներ	✓	✓	✓	
15. Համարտադրության պայմանագրեր		✓	✓	
16. Ռեժիսորի նախկին ֆիլմերը	✓	✓	✓	✓
17. Ֆիլմի սևագիր մոնտաժված տարբերակը			✓	✓
18. Ավարտված ֆիլմ				✓
20. Վիզուալ նյութեր (գրաֆիկա, յուսանկարներ.)	✓	✓		
21.Ռեժիսորի և պրոդյուսերի յուսանկարները	✓	✓	✓	✓